ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՎԵՐԴԼՈՎԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սվերդլով համայնք, հասցե գ.Սվերդլով

Հեռախոս 077-052-600, էլ. Փոստ sverdlov.lori@mta.gov.am

28/16 – 482
23.12.2016թ

ՀՀ Լոռու մարզպետ
Ա.Նալբանդյանին

Ներկայացնում եմ Սվերդլով համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 21-ի «ՀՀ Լոռու մարզի Սվերդլով համայնքի ՀՁՀԾ հաստատելու մասին» թիվ 60 և «Համայնքի նորածին երեխաների ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին »թիվ 61 որոշումները:

Առդիր՝ 1 ֆայլ:

Համայնքի ղեկավար՝ Կ.Չերքեզյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՎԵՐԴԼՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սվերդլով համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սվերդլով, (077) 052600, sverdlov.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 60

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՎԵՐԴԼՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնմակառաբվարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2) -րդ կետի պահանմջներով.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սվերդլով համայնմքի 2017-2021թվականների սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՀՐԱՉԻԿ
2. ԽԱԼԱԹՅԱՆ ԱՎԵՏԻՔ
3. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱԶԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄՍԱՐ ՉԵՐՔԵԶՅԱՆ**

# ՍՎԵՐԴԼՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

## 2017 - 2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար Վ.Չերքեզյան

Հաստատվել է համայնքի ավագանու 2016թ դեկտեմբերի 21 -ի թիվ 60 որոշմամբ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

2.Համայնքի իրավիճակի նկարագրություն:

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում:

4. ՀՀԶԾ ֆինանսավորում:

5.ՀՀԶԾ մոնիթորինգ:

## 1. Ի՞ՆՉ Է ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական տնտեսական ,բնական և մարդկային ռեսուրսների գնահատման պայմաններում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է ,որը ենթադրում է համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

ՀՀԶԾ-ում ներառվում են համայնքի բոլոր պարտադիր խնդիրները և դրանց լուծման նպատակով նախատեսվող միջոցառումները: Միջոցառումները պետք է նկարագրված լինեն հստակ,իսկ նախատեսված արդյունքները՝ չափելի: Դրանց իրականացումը պետք է շարունակաբար մոնիթորինգի ենթարկվի, որպեսզի սահմանված թիրախներից շեղումների դեպքում հնարավոր լինի քայլեր ձեռնարկել միջոցառումներ պլանավորված հուն վերադարձնելու նպատակով:

ՀՀԶԾ շրջանակներում իրականացված յուրաքանչյուր միջոցառում պետք է գնահատվի ,որպեսզի բացահայտվեն թիրախային արդյունքներից հնարավոր շեղումների պատճառները,մշակվեն միջոցառումների իրականացման ավելի արդյունավետ իրականացման այլ ընտրանքային տարբերակներ և հետագայի համար դասեր քաղել:

ՀՀԶԾ-ը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից:Համայնքի ղեկավարին կից խորհուրդը կազմակերպում և անց է կացնում հանրային քննարկումներ և բաց լսումներ:Այնուհետև ՀՀԶԾ-ը քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ:

## 2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 2.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 3346,19 հա: Գյուղը կազմավորվել է մոտավորապես 18-րդ դարի առաջին կեսին: Հիմնադիրները եկել են գյուղից 6 կմ հյուսիս-արևելք գտնվող Դորբանդ կոչվող բնակավայրի բնակիչները:Գյուղն ավելի հին է քան ենթադրվում է,ինչի մասին խոսում է գյուղի կենտրոնում տուֆից և բազալտից V-VII դարերում կերտված,լավ պահպանված Ս.Գևորգ եկեղեցին:Այն գտնվում է ծովի մակարդակից 1480 մ բարձրության վրա: Գյուղի տարածքում են գտնվում Ս.Գևորգ մատուռը ,Ս.Գևորգ եկեղեցին՝ կառուցված V-VIII դարերում, սրբատաշ սև տուֆից և տեղական բազալտից,որը վերանորոգվել է 80-ական թվականներին:Գյուղի միջով հոսում է Մխչյանա գետը: Գյուղի բնակչությունը նվազում է: Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է,ամառը՝ զով , տեղումների և կարկուտի հաճախականությունը՝ մեծ:Անձրևային տարիներին հաջորդում են նաև երաշտի տարիներ,ինչը խիստ բացասաբար է անդրադառնում գյուղատնտեսության զարգացման վրա:
Գյուղամերձ խոտհարքները և արոտավայրերը գտնվում են ծովի մակերևույթից 1900-2000 մ բարձրության սահմաններում, անտառային ենթալպյան և ալպյան գոտիներում՝ մեղմ միջակ թեք լանջերում,որը և բացասաբար է անդրադառնում անասնապահության զարգացման համար:Համայնքի տարածքով անցնում է միջպետական և միջհամայնքային նշանակության ավտոճանապարհի 8կմ երկարությամբ հատվածը,որը ներկայումս գտնվում է անմխիթար վիճակում,որի պատճառով դժվարանում է բնակիչների կապը տարածաշրջանային կենտրոնների և մարզկենտրոնից:

### ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղում առկա բնակիչների թիվը կազմում է՝ 1174 որոնցից տղամարդ՝ 579 ,կին՝ 595: Տնային տնտեսությունների թիվը կազմում է 320: Տղամարդիկ կազմում են բնակչության 49 %-ը: Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. Երեխաներ 0-6 տ. - 104
2. Դպրոցականներ7-17 տ. - 151
3. 18-62 տարեկան -809
4. Թոշակառուներ - 150
5. Հաշմանդամներ - 46
6. Աշխատունակներ - 566
7. Միակողմանի ծնողազուրկ երեխաներ - 2
8. Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքներ- 2
9. Արցախյան պատերազմի մասնակիցներ - 18

Համայնքում փախստականներ չեն բնակվում:

### 2.2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 23707,0 ՀՀդրամ:

- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 34,8 % :

- Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները,հիմնական սպառման շուկաները

Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը՝ 320 տ/տ Գյուղ.արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը

ա. ցորեն - 4550ց/հա
բ.գարի - 240ց/հա
գ .եգիպտացորեն - 350ց/հա
դ. կարտոֆիլ - 17500ց/հա
ե.բանջարանոցային մշակաբույսեր - 2255ց/հա
զ. Բնական խոտհարքներ - 28065ց/հա
է. Կաթ - 10ց/գլուխ
ը. միս - 100ց
թ.բուրդ - 0.02ց/գլուխ
ժ.մեղր - 0,1ց/փեթակ
ի. ձու --

ցանքատարածությունները-հա
ա. Հացահատիկ - 130հա
բ.գարի - 12հա
գ.եգիպտացորեն - 5հա
գ.կարտոֆիլ - 70հա
դ.բանջարանոցային մշակաբույսեր - 21հա
ե.բնական խոտհարքներ - 751,5հա

անասնագլխաքանակ.գլուխ
ա.խոշոր եղջերավոր անասուններ - 1223
այդ թվում կովեր - 510
բ.մանր եղջերավոր անասուններ - 1160
այդ թվում մայրեր - 889
գ. խոզեր - 95
դ. թռչուններ - 1707
ե.մեղվաընտանիքներ 317

Գյուղատնտեսական արտադրանքի սպառման հիմնական շուկան մասնավոր առևտուրն է:

- Զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բնական,պատմական և մշակութային հուշարձաններ

Գյուղի կենտրոնում են գտնվում Ս.Գևորգ մատուռը և Ս.Գևորգ եկեղեցին՝ կառուցված V-VIII դարերում սրբատաշ սև տուֆից և տեղական քարերից:Գյուղից 6կմ հյուսիս-արևելք գտնվում է Դորբանդավանք եկեղեցին: Անշուշտ այդ ամենը համարվում է զբոսաշրջիկների հետաքրքրություններ ներկայացնող պատմամշակութային արժեքներ:

- Դպրոցական,նախադպրոցական հաստատություններ

Համայնքն ունի միջնակարգ դպրոց, որը գտնվում է բարվոք վիճակում,որտեղ սովորում են 121աշակերտ:Դպրոցն ունի 27աշխատող,որից 21ուսուցիչ:Ուսուցիչներից 19 ունի բարձրագույն կրթություն:Համայնքը ունի նաև մեկ դպրոցահեն նախակրթարան, որ հաճախում են 9երեխա:

- Առողջապահական հաստատություններ

Համայնքում գործում է մեկ բժշկական ամբուլատորիա:Շենքը գտնվում է լավ վիճակում:Այն ունի նոր և ժամանակակից սարքավորումների կարիք: Բուժ կետը ունի մեկ աշխատող:

- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ

Ընտանեկան համակարգում գրանցված ընտանիքների թիվը կազմում է 88 :

- Գործազրկության մակարդակը գյուղում կազմում է 30 % :

## 2.3. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

Համայնքում հիմնախնդիրները շատ են, գրեթե բոլոր ոլորտներում անհրաժեշտություն կա վերակառուցելու,բարեկարգելու:Դրանցից մի մասը ունի հրատապ լուծման կարիք:

Համայնքի վարչական տարածքում պետության կողմից շարունակվող ջրագծի կառուցման ծրագիր

- Համայնքի վարչական տարածքում շարունակվող պետական աջակցության մարզային ծրագիր
  - ✓ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ /ԾԻԳ/» և Սվերդլով համայնքի միջև կնքած պայմանագրով 2տարի ժամկետում իրականացնել համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման,կառուցման աշխատանքներ:

- Պետության և միջազգային ու դոնոր կազմակերպությունների կողմից նախատեսվող ծրագրեր

- ✓ Համայնքի վարչական տարածքով անցնող 8 կմ երկարությամբ
- ✓ հանրապետական նշանակության ճանապարհահատվածի և ներհամայնքային ճանապարհների վերակառուցում, վերանորոգում
- ✓ Փողոցների լուսավորություն
- ✓ Մանկապարտեզի կիսակառույց շենքի կառուցում
- ✓ Դպրոցի շենքի վերանորոգում
- ✓ Կաթի վերամշակման արտադրամասի ստեղծում
- ✓ Խոշոր եղջերավոր անասունների ցեղի բարելավում

- Համայնքի կողմից նախատեսվող ծրագրեր
  - ✓ Գերեզմանների ցանկապատում
  - ✓ Եկեղեցիների,մատուռների պահպանում

2,4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

| հ/հ | Մուտքերի անվանում /եկամտատեսակներ/ | 2016թնախատեսված/հազ.դր/ | 2016թ Փաստացի/հազ.դր/ | 2017թ Կանխատեսվող/հազ.դր/ | 2018թ Կանխատեսվող/հազ.դր/ | 2019թ Կանխատեսվող/հազ.դր/ | 2020թ Կանխատեսվող/հազ.դր/ | 2021թ Կանխատեսվող/հազ.դր/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 5741,3 | 5745,0 | 5745,7 | 6439,7 | 6824,3 | 7824,0 | 8268,8 |
| 2 | Գույքահարկ | 2436,0 | 2130,0 | 2599,6 | 2620,6 | 2630,6 | 2740,8 | 2865,5 |
| 3 | Տեղական տուրքեր և վճարներ | 80,0 | 90,0 | 83,0 | 90,0 | 100,0 | 110,0 | 120,0 |
| 4 | Հողի վարձավճարներ | 370,0 | 426,5 | 400,0 | 450,0 | 470,0 | 480,0 | 500,0 |
| 5 | Դոտացիա | 14539,7 | 14539,7 | 14539,7 | 14539,7 | 14539,7 | 14539,7 | 14539,7 |
| 6 | Այլ | 540,0 | 530,0 | 540,0 | 580,0 | 590,0 | 600,0 | 620,0 |
| | | | | | | | | |
| | Ընդամենը | 23707,0 | 23461,2 | 23908,0 | 24720,0 | 25154,6 | 26294,5 | 26914,0 |

| հ/հ | Ելքերի անվանում /ծախսատեսակներ | 2016թ Նախատեսված /հազ.դր/ | 2016թ Փաստացի /հազ.դր/ | 2017թ Կանխատեսվող /հազ.դր/ | 2018թ Կանխատեսվող /հազ.դր/ | 2019թ Կանխատեսվող /հազ.դր/ | 2020թ Կանխատեսվող /հազ.դր/ | 2021թ Կանխատեսվող /հազ.դր/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Աշխատավարձ և պարգևատրություն | 8335,0 | 7761,4 | 9944,0 | 9944,0 | 9944,0 | 9944,0 | 9944,0 |
| 2 | Ծառայութ.և ապրանքՆերի ձեռք բերում | 6120,0 | 6075,0 | 3950,0 | 8146,0 | 8156,0 | 9050,0 | 9050,0 |
| 3 | Դրամաշնորհ | 3200 | 3200,0 | 5000,0 | 1000,0 | 1000,0 | 1000,0 | 1000,0 |
| 4 | Սոց.նպաստներ | 5740,0 | 5730,0 | 3690,0 | 4500,0 | 4700,0 | 4890,0 | 5100,0 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | Այլ ծախսեր | 372,0 | 370,0 | 1324,0 | 500,0 | 550,0 | 600,0 | 850,0 |
| 6 | Հիմնական միջոց | 540,5 | 567,0 | 452,0 | 610,0 | 750,0 | 800,0 | 900,0 |
| | Ընդամենը | 24276,0 | 24108,4 | 24360,0 | 24700,0 | 24100,0 | 26284,0 | 26844,0 |

## 2.5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ Համայնքի գույքի կառավարում
- ✓ Գյուղատնտեսության զարգացման խթանում
- ✓ Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպում երիտասարդությանների գրավմամբ
- ✓ Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն
- ✓ Համայնքի աղբահանություն և սանիտարական մաքրում,համայնքային գերեզմանատան պահպանում
- ✓ Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում
- ✓ Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում,արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծում:

## 2.6. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ)ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- Համայնքի ուժեղ կողմերը

- ✓ Համայնքի աշխարհագրական դիրքը
- ✓ Մարդկային ռեսուրսները
- ✓ Համայնքի սեփականությունը
- ✓ Համայնքի կարողությունները,աշխատակազմի փորձը,գիտելիքները և հմտությունները
- ✓ Ղեկավարության հետևողականությունը

- Համայնքի թույլ կողմերը

- ✓ Ֆինանսական ռեսուրսների սակավությունը
- ✓ Գործազրկության մակարդակը
- ✓ Աղքատության մակարդակը
- ✓ Առևտրի շուկայի բացակայությունը:

- Համայնքի հնարավորությունները

- ✓ Համայնքի տնտեսական կյանքի աշխուժացում
- ✓ Գյուղատնտեսության զարգացման միտումներ

- ✓ Համագործակցություն այլ համայնքների հետ:
- ✓ Տեղեկատվական համակարգերի և ցանցերի զարգացում

  - Համայնքի սպառնալիքները

- ✓ Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումներից ետ մնալը
- ✓ Նոր տեխնոլոգիաների և ծառայությունների մատուցման նկատմամբ հետաքրքրության պակաս
- ✓ Խանգարող հանգամանքներ
- ✓ Անհաղթահարելի թույլ կողմեր
- ✓ Ֆինանսական ռեսուրսների պակաս
- ✓ Բնակչության արտագաղթ
- ✓ Բնակչությանան տարբերությունը տեղական ինքնակառավարման հանդեպ:

## 3.ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

### 3.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Համայնքի զարգացման տեսլականն է՝
Ունենալ զարգացած և հզոր համայնք,որտեղ հիմնվելով համայնքի ուժեղ և փաստացի հնարավորությունների վրա ունենալ բնակիչների արժանապատիվ ու բարեկեցիկ կյանք:
Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակների

- ✓ Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին /արտահայտված տոկոսով/

| | 2016 փաստացի | 2017 կանխատ. | 2018 Կանխատ. | 2019 Կանխատ. | 2020 Կանխատ. | 2021 Կանխատ. |
|---|---|---|---|---|---|---|
| Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքներ | 88 | 90 | 88 | 85 | 80 | 75 |
| Համայնքի ընտանիքների ընդհանուր թիվը | 320 | 322 | 324 | 326 | 328 | 330 |
| Աղքատութ.շեմից ցածր ընտ.հարաբերությունը համայնքի ընտ.ընդհանուր թվին/արտահայտված տոկոսով/ | 27,5 | 28,1 | 27,1 | 26,07 | 24,4 | 22,7 |

✓ Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով

| | 2016 փաստացի | 2017 կանխատ | 2018 կանխատ | 2018 կանխատ | 2020 կանխատ | 2021 կանխատ |
|---|---|---|---|---|---|---|
| Եկամուտ | 23707,0 | 23908,0 | 24720,0 | 25154,6 | 26294,5 | 26914,0 |
| Համայնքի սեփական եկամուտ | 8257,3 | 8428,3 | 9600,3 | 10024,9 | 11154,8 | 11754,3 |
| Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ/արտահայտված տոկոսով | 34,8 | 35,2 | 38,8 | 39,8 | 42,4 | 43,6 |

✓ Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը /չպայմանավորված բնական աճով/նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով/

| | 2016 փաստացի | 2017 կանխատ | 2018 կանխատ | 2019 կանխատ | 2020 կանխատ | 2021 կանխատ |
|---|---|---|---|---|---|---|
| բնակչություն | 1084 | 1086 | 1089 | 1093 | 1098 | 1104 |
| Բնակչության թվի փոփոխություն նախորդ տարվա համեմատ/արտահայտված տոկոսով/ | 0,18 | 0,28 | 0,37 | 0,46 | 0,53 | 0,55 |

## 3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

1) Գործարար միջավայրը բարելավել և ձեռնարկատիրությունը խթանել:
2) Համայնքի գույքը կառավարել:
3) Նախադպրոցական կրթությունը և արտադպրոցական դաստիարակությունը կազմակերպել:
4) Ակտիվ մշակութային և մարզական կյանքն ակտիվացնել՝ երիտասարդության ներգրավմամբ:
5) Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:
6) Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում
7) Ապահովել համայնքի բնակավայրերի կառուցապատումը,բարեկարգումը և կանաչապատումը: Կազմակերպելհամայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը:Կոմունալ տնտեսության աշխատանքներն ապահովել, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը կազմակերպել,
8) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքը կազմակերպել,համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը կազմակերպել:
9) Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում:
10) Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգիրավիճակներումբնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:
11) Գյուղատնտեսության զարգացումը խթանել:
12) Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:
13) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումն ապահովել:
14) Համայնքում ծնելիությունը և բազմազավակությունը խթանել:
15) Ապահովել համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը ;

Բարեգործությունը խթանել՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով

## 4.ՀՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներից,
- Բարեգործություն/նվիրատվություններից
- Այլ աղբյուրներից,

:

## 5. ՀՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀԶԾ մոնիթորինգը կիրականացվի համաձայն մոնիթորինգի անձնագրով (Հավելված 3) սահմանված ցուցանիշների և ժամանակացույցի:

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 1

«Սվերդլով համայնքի խմելու ջրագծի վերակառուցում, կառուցում»

-----------------------------------------------------------------------------------

(Ծրագրի անվանում)

| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | ՀՀ Լոռու մարզի Սվերդլով համայնքի ջրամատակարարման ապահովում | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագրի անմիջական նպատակ | Համայնքի բնակչության շուրջօրյա ջրամատակարարման ապահովում | | | | | | |
| | Ցուցանիշներ աճ (%) | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 0 | 100 | 100 | 100 | 100 | 100 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. Ջրագծի վերակառուցում,կառուցում | | | | | | |
| | Ցուցանիշներ կմ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 10 | 4 | | | | |
| | 2. Կառուցված,վերակառուցված գործող ջրագիծ | | | | | | |
| | Ցուցանիշներ կմ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 10 | 4 | 14 | 14 | 14 | 14 |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1.Հողային աշխատանքների իրականացում<br>1.2.ՕՂՋ ների և կապտաժների կառուցում,վերանորոգում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1.Խողովակների միացում,սարքավորումների տեղադրում<br>2.2.Փոսալցում,համակարգի միացում | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 23,04 մլն.դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 438,35 մլն դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝641,39մլն. դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | ՏԶՀ ՊՀ աջակցության ֆինանսավորում,համայնքի ներդրում | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Ֆինանսական միջոցներ | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի 1174բնակիչներ,320տնային տնտեսություն,1դպրոց, 1փոստի բաժանմունք, 1 բուժ. Կետ, 3 առևտրի սպասարկման կետ | | | | | | |
| Ծրագրի սկիզբը և ավարտը | 2016-2017 թթ | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Ծրագրի իրականացման նպատակով անհրաժեշտ է վերակառուցել 10կմ երկարության ջրագիծ, 4կմ երկարությամբ բաշխիչ ցանց,1հատ կալանք,կառուցել 1հատ ՕՂՋ: | | | | | | |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 2

«Սվերդլով համայնքի վարչական տարածքով անցնող ավտոճանապարհի վերանորոգում»

Ծրագրի անվանում

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Համայնքային ճանապարհային ենթակառույցի պահպանություն</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Ունենալ բարեկարգ,ասֆալտապատ համապատասխան տարածաշրջանային նշանակության ավտոճանապարհ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ<br>կմ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>6</td><td>6</td><td>6</td><td>6</td><td>6</td><td>6</td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Ունենալ միջհամայնքային ասֆալտապատ բարեկարգված ավտոճանապարհ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ<br>կմ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>6</td><td>6</td><td>6</td><td>6</td><td>6</td></tr>
<tr><td colspan="7">2. Վերանորոգված տարածաշրջանային նշանակության միջպետական ճանապարհ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ<br>Ասֆալտապատ,բարեկարգ ճանապարհի մ.քառ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>50400</td><td>50400</td><td>50400</td><td>50400</td><td>50400</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1.Կատարել 6կմ երկարությամբ միջհամայնքային ավտոճանապարհի նախնական վերանորոգում<br>1.2.<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1.Կատարել 50400մ.քառ մակերեսով նախապես վերանորոգման ծրագրված ավտոճանապարհի ասֆալտապատում<br>2.2.</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 0<br>Կապիտալ ծախսեր՝ 1159200000 ՀՀ դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 1159200000 ՀՀ դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Պետական ֆինանսավորում</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական փուլերը</td><td colspan="7">Պետական ֆինանսավորում</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Սվերդլով համայնքի 1174 և հարևան Պրիվոլնոյե համայնքի 1094բնակիչներ, անհատական բանակի ավտոտրանսպորտային միջոցներ և տեխնիկա</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբը և ավարտը</td><td colspan="7">2017-2021թթ</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրությունը</td><td colspan="7">Վերակառուցել ասֆալտապատել ՀՀ Լոռու մարզի Սվերդլով համայնքի վարչական համայնքով անցնող 6կմ /50400քառ.մ ընդհանուր մակերեսով/ ասֆալտապատ ճանապարհը:</td></tr>
</table>

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 3

**«Փողոցային լուսավորություն»**

Ծրագրի անվանում

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Համայնքի բնակավայրի կառուցապատում, բարեկարգում | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Ունենալ լուսավոր և գեղեցիկ համայնքային փողոցներ | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | Լուսավորության կետերի կառուցում | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 0 | 60 | 70 | 50 | 90 | 100 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. Լուսավորության կետերի կառուցում | | | | | | |
| | Ցուցանիշներ հատ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 0 | 60 | 70 | 80 | 90 | 100 |
| | 2. Լուսատուների տեղադրում | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 0 | 60 | 70 | 80 | 90 | 100 |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքի ապահովող գործողություններ<br>1.1. Լուսամփոփների, հաղորդալարերի և անհրաժեշտ սարքավորումների ձեռք բերում<br>1.2. Հենասյուների ձեռք բերում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. անհրաժեշտ քանակի լուսատուների տեղադրում<br>2.2. | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 2.0 մլն ՀՀ դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 6.0մլն ՀՀ դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 8մլն ՀՀ դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Գտնել դոնոր կազմակերպություններ | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Ֆինանսական միջոցների ձեռք բերում | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի 1174 բնակիչները,հյուրերը,ճամփորդները | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017-2021թթ | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Անցկացնել ներհամայնքային 10կմ ընդհանուր երկարությամբ փողոցների լուսավորություն,հասցնելով մինչև 100հատ լուսատու կետեր ապահովել համայնքային փողոցների լուսավորությունը։ | | | | | | |

ՀՀՂՀ ՖԻՆԱՆՍԱՎՈՐ

ՍՎԵՐԴԼՈՎ ՀԱՄԱՅՆՔ

(2017-20

| Պարտադիր խնդիր | Բյուջետավորված միջոցներ մլն.դրամ | Ծրագրի կատարումն ըստ տարիների | | | | | Ֆինանսավորմա | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | Համայնքի սեփական եկամուտներ | Ներքին պաշտոնական դրամաշնորհներ | Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ |
| **1. Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում** | 3,8 | 0 | 0,5 | 0,8 | 1,0 | 1,5 | 0,5 | | 3,3 |
| **2. Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարում** | 2.9 | 0.452 | 0.5 | 0.6 | 0.65 | 0.7 | 1 | | |
| **3. Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն** | 1.4 | 0 | 0.2 | 0.3 | 0.4 | 0.5 | 1.4 | | |
| **4. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ** | 2.09 | 0.04 | 0.25 | 0.4 | 0.6 | 0.8 | 1.09 | | |
| **5. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն** | 19.18 | 3.3 | 3.1 | 3.76 | 4.02 | 4.5 | 19,18 | | |
| **6. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը** | 1.85 | 0 | 0.3 | 0.45 | 0.5 | 0.6 | 0,85 | | 1 |
| **7. Համայնքում բնակարանային շինարարության խթանումը** | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| **8. Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը** | 6.83 | 1.73 | 1 | 1.2 | 1.4 | 1.5 | 1,83 | | 5 |

ՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

021 թթ.)

| ն աղբյուրներ | | | Ծախսերի դասեր | | Ֆինանսավորման կարգավիճակ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բարեգործություն/Ն վիրատվություն | Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցու-թյուն | Այլ աղբյուրներ | Ընթացիկ ծախսեր | Կապիտալ ծախսեր | Ֆինանսավորումն առկա է | Ֆինանսավորման շուրջ ընթանում են բանակցություններ | Ներկայացվել է ֆինանսավորման հայտ | Ֆինանսավորման հարցը լուծված չէ |
| | | | 0,5 | | | | | լուծված չէ |
| | | 1.9 | 1,0 | | | | | լուծված չէ |
| | | | 1,4 | | առկա է | | | |
| | | 1 | | | | | | լուծված չէ |
| | | | 19,18 | | առկա է | | | |
| | | | 0,85 | | | | | լուծված չէ |
| 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | | | 1,83 | | | | | լուծված չէ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **9. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում** | 1.4 | 0.15 | 0.2 | 0.3 | 0.35 | 0.4 | 1.4 | | |
| **10. Աջակցություն պետական պաշտպանության իրականացմանը** | | | | | | | | | |
| **11. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում** | 0.85 | 0 | 0.1 | 0.2 | 0.25 | 0.3 | 0.85 | | |
| **12. Գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը** | 10,0 | 0,5 | 1 | 2,0 | 3,0 | 3,5 | | | 10,0 |
| **14. Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող համայնքներում՝ զբոսաշրջության զարգացման խթանում** | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| **15. Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում** | 1 | 0 | 0.15 | 0.2 | 0.3 | 0.35 | 1,0 | | |
| **16.Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանում** | 2.2 | 0.39 | 0.4 | 0.45 | 0.48 | 0.5 | 2.2 | | |
| **17.Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծում** | 1.05 | 0 | 0.15 | 0.2 | 0.3 | 0.4 | 1.05 | | |
| **19. Բարեգործության խթանում** | 7,0 | 0 | 1 | 1,5 | 2,0 | 2,5 | 0 | | 7,0 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | առկա է | | | |
| | | | | | | | | |
| | | | | | առկա է | | | |
| | | | | | | | | լուծված չէ |
| 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | | 1 | | | | | | լուծված չէ |
| | | | | | առկա է | | | |
| | | | | | առկա է | | | |
| | | | | | | | | լուծված չէ |

Մ Ո Ն Ի Թ Ո Ր Ի Ն Գ Ի  Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր
Սվերդլով
( 2017-2021 թվականներ)

| Տրամաբանական մոդելի բաղադրիչ | Ցուցանիշի փաստացի արժեք (2015) | Ցուցանիշի կանխատեսվող արժեք (2016) | Ցուցանիշի թիրախային արժեք (2017) | Ցուցանիշի փաստացի արժեք (2017) | Ցուցանիշի կատարողական (2017) | Ցուցանիշի թիրախային արժեք (2018) | Ցուցանիշի փաստացի արժեք (2018) | Ցուցանիշի կատարողական (2018) | Ցուցանիշի թիրախային արժեք (2019) | Ցուցանիշի փաստացի արժեք (2019) | Ցուցանիշի կատարողական (2019) | Ցուցանիշի թիրախային արժեք (2020) | Ցուցանիշի փաստացի արժեք (2020) | Ցուցանիշի կատարողական (2020) | Ցուցանիշի թիրախային արժեք (2021) | Ցուցանիշի փաստացի արժեք (2021) | Ցուցանիշի կատարողական (2021) | Տվյալների հավաքագրման պարբերականությունը | | Ցուցանիշի ստացման աղբյուր | Ցուցանիշի ստացման մեթոդ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | | | | | Կիսամյակային | Տարեկան | | |
| **Համայնքի կայուն զարգացում** | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով) | 25,3 | 27,5 | **28,1** | | | **27,1** | | | **26,07** | | | **24,4** | | | **22,7** | | | | X | Մարզպետարան-ներ (Երևան, Գյումրի, Վանաձոր, Արարատ, Ջերմուկ համայնքների համար՝ համայնքապետարաններ) | Փաստաթղթային ուսումնասիրություն/հարցազրույց |
| Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով | 2 | 3,5 | 4,0 | | | 4,5 | | | 5,0 | | | 5,5 | | | 6,0 | | | | | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով | 0,1 | 0,18% | 0,28% | | | 0,37 | | | 0,46 | | | 0,53 | | | 0,55 | | | | X | ՀՀ Ոստիկանություն | Հարցում |
| **1. Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում** | **0** | **0** | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **2. Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարում** | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **3. Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն** | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Առանձնացված նախադպրոցական հաստատություն (այն համայքներում, որտեղ առանձին նախակրթարան չկա) | | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի հարաբերությունը համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով) | | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Ծնողների բավարարվածությունը նախադպրոցական կրթությունից | | | | | | | | | | | | | | | | | | | | Նախադպրոցա- կան հաստատություն-ներ հաճախող երեխաների ծնողներ | Հարցում կամ խմբային հարցազրույց/ֆոկուս խումբ |
| Արտադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվի հարաբերությունը համայնքի դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով | | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Ծնողների բավարարվածությունը արտադպրոցական կրթությունից | | | | | | | | | | | | | | | | | | X | | Արտադպրոցական հաստատություն-ներ հաճախող երեխաների ծնողներ | Հարցում կամ խմբային հարցազրույց/ֆոկուս խումբ |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **4. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ** | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Համայնքապետարանի կազմակերպված մշակութային միջոցառումների թիվ | | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Համայնքում գործող մշակութային խմբակների թիվ | | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Մշակութային խմբակներում ընդգրկված երեխաների ու պատանիների թվի  հարաբերությունը համայնքի երեխաների ու պատանիների թվին՝ արտահայտված տոկոսով | | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Ծնողների բավարարվածությունը մշակութային խմբակներից | | | | | | | | | | | | | | | | | | X | | Արտադպրոցական հաստատություն-ներ հաճախող երեխաների ծնողներ | Հարցում կամ խմբային հարցազրույց/ֆոկուս խումբ |
| Համայնքապետարանի միջոցներով կազմակերպված երեխաների ու պատանիների այցելություններ համայքից դուրս մշակութային օջախներ | | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Համայնքապետարանի միջոցներով համայնքում կազմակերպված մարզական միջոցառումների թիվ | 1 | 2 | 3 | | | 4 | | | 5 | | | 6 | | | 7 | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Համայնքային գրադարանի (ներառյալ էլեկտրոնային գրադարանի) առկայություն | այո | այո | այո | | | այո | | | այո | | | այո | | | այո | | | | X | Համայնքապետա-րան | Դիտարկում |
| Գրադարնից օգտվողների թվի տարեկան աճ նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով | 0,1 | 0,12 | 0,15 | | | 0,17 | | | 0,2 | | | 0,22 | | | 0,24 | | | | X | Գրադարան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **5. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն** | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **6. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը** | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Համայնքապետարանի օժանդակությամբ համայնքում գործող մարզական խմբակների թիվ | 1 | 1 | 1 | | | 2 | | | 3 | | | 4 | | | | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Մարզական խմբակներում ընդգրկված երեխաների ու պատանիների թվի հարավերությունը համայնքի երեխաների ու պատանիների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով | 10 | 13 | 15 | | | 17 | | | 20 | | | 25 | | | 30 | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Ծնողների բավարարվածությունը մարզական խմբակներից | այո | այո | այո | | | այո | | | այո | | | այո | | | այո | | | X | | Մարզական խմբակներ հաճախող երեխաների ու պատանիների ծնողներ | Հարցում կամ խմբային հարցազրույց/ֆոկուս խումբ |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **7. Համայնքում բնակարանային շինարարության խթանումը** | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Համայնքում կառուցված բնակելի մակերես | 30720 քառ.մ | 30720 | 30720 | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Համայնքապետարանում հաշվառված բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թվի հարաբերությունը համայնքի տնային տնտեսությունների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով | | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **8. Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը** | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն | այո | այո | այո | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Համայնքում գլխավոր հատակագծին համապատասխան տրված շինարարական թույլտվությունների թվի հարաբերությունը տրված շինարարական թույլտվությունների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով | 0 | 1 | 1 | | | 2 | | | 3 | | | 4 | | | 5 | | | | X | Համայնքապետա-րան | Փաստացի ուսումնասիրություն |
| Համայնքում քաղաքաշինական կանոնադրության առկայություն | ոչ | ոչ | այո | | | այո | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Կառուցապատման թույլատրության մեջ նշված ժամկետների պահպանմամբ իրականացված շինարարությունների թվի հարաբերությունը համայնքում իրականացված շինարարությունների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով | | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան | Փաստացի ուսումնասիրություն |
| Համատիրությունների կողմից սպասարկվող բնակելի մակերեսի հարաբերությունը համայնքի կողմից սպասարկվող բնակելի մակերեսին, արտահայտված տոկոսով | | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան/համատիրու-թյուններ | Փաստացի ուսումնասիրություն |
| Համայնքում հավաքված և աղբավայրերում տեղադրված աղբի հարաբերությունը համայնքում առաջացող ամբողջ աղբին, արտահայտված տոկոսով | 0 | 0 | 0,1 | | | 0,11 | | | 0,12 | | | 0,15 | | | 0,17 | | | | X | Համայնքապետա-րան/մասնավոր օպերատորներ | Խորքային հարցազրույց |
| Համայնքի սանիտարական մաքրման ենթարկվող տարածքի մակերեսի հարաբերությունը համայնքի ընդհանուր տարածքի մակերեսին, արտահայտված տոկոսով | | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան/մասնավոր օպերատորներ | Հարցում/խորքային հարցազրույց |
| Համայնքի բնակիչների բավարարվածությունը աղբահանությունից և սանիտարական մաքրումից | այո | այո | այո | | | այո | | | այո | | այո | այո | | | այո | | | X | | Համայնքի բնակիչներ | Հարցում կամ խմբային հարցազրույց/ֆոկուս խումբ |
| Համայնքի բնակիչների բավարարվածությունը ջրամատակարարումից և ջրահեռացումից | ոչ | ոչ | այո | | | այո | | | այո | | այո | այո | | | այո | | | X | | Համայնքի բնակիչներ | Հարցում կամ խմբային հարցազրույց/ֆոկուս խումբ |
| Համայնքի բնակիչների բավարարվածությունը ոռոգման ջրի մատակարարումից | | | | | | | | | | | | | | | | | | | | | Հարցում կամ խմբային հարցազրույց/ֆոկուս խումբ |
| Համայնքի բնակիչների բավարարվածությունն աղբահանությունից և սանիտարական մաքրումից | այո | այո | այո | | | այո | | | | | | | | | | | | X | | Համայնքի բնակիչներ | Հարցում |
| Համայնքի կանաչ տարածքների տարեկան աճ, արտահայտված տոկոսով | | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Գերեզմանատների համապատասխանությունը հատակագծին (այսինքն՝ գերեզմանատան հաստատված տարածքից դուրս գերեզմանատեղի չի հատկացվում) | այո | այո | այո | | | այո | | | այո | | | այո | | | այո | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **9. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում** | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Համայնքի բնակիչների բավարարվածությունը համայնքը սպասարկող հասարակական տրանսպորտի աշխատանքներից | այո | այո | այո | | | այո | | | այո | | այո | այո | | | այո | | | X | | Համայնքի բնակիչներ | Հարցում |
| Համայնքային ենթակայության ճանապարհներին տեղադրված ճանապարհային նշանների թվի հարաբերությունն անհրաժեշտ ճանապարհային նշաններին, արտահայտված տոկոսով | | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Համայնքում կահավորված ավտոբուսային կանգառների հարաբերությունը ավտոբուսային կանգառների ընդհանուր թվին | 1 | 1 | 1 | | | 2 | | | 2 | | | 2 | | | 2 | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Համայնքը սպասարկող հասարակական տրանսպորտի պարկում 5 և ավելի տարի հնություն ունեցող մեքենաների հարաբերությունն ավտոպարկի մեքենաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով | | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան/ուղևորափո-խադրումներ իրականացնող ընկերություն(ներ) | Փաստաթղթային ուսումնասիրություն/ հարցում |
| Համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների ամեն տարի ասֆալտապատած հատվածի երկարության հարաբերությունը համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների երկարությանը, արտահայտված տոկոսով | 0 | 0 | 0 | | | 1 | | | 1 | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան/շինարարութ-յուն իրականացնող ընկերություն(ներ) | Փաստաթղթային ուսումնասիրություն/ հարցում |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **10. Աջակցություն պետական պաշտպանության իրականացմանը** | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Համայնքում բնակվող զինապարտ քաղաքացիների գրանցամատյանի վարում | այո | այո | այո | | | այո | | | այո | | | այո | | | այո | | | | X | Համայնքապետա-րան/տարածքային զինվորական կոմիսարիատներ | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **11. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում** | **այո** | այո | այո | | | | | | | | | | | | | | | | | | |
| **12. Գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանում** | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Համայնքի՝ գյուղատնտեսությամբ զբաղվող բնակիչների եկամտի տարեկան աճ | | | | | | | | | | | | | | | | | | | X | Գյուղատնտեսու-թյամբ զբաղվող բնակիչներ | Հարցում կամ խմբային հարցազրույց/ֆոկուս խումբ |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բերքատվության տարեկան աճ | | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան | Հարցում |
| Համայնքի մշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի հարաբերությունը ընդհանուր գյուղատնտեսական նշանակության հողերին արտահայտված տոկոսով | 33,0 | 35,3 | 38,0 | | | 40,0 | | | 45,0 | | | 50,0 | | | 55,0 | | | | X | Համայնքապետա-րան/ՋՕԸ | Հարցում |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **13. Համայնքում շրջակա միջավայրի պահպանություն** | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Համայնքում էներգախնայող լամպերով լուսավորվող տարածքի հարաբերությունը ընդհանուր լուսավորվող տարածքին, արտահայտված տոկոսով | | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Համայնքի կազմակերպած ծառատունկի ժամանակ տնկված ծառերի կպչողականություն, արտահայտված տոկոսով | | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Համայնքի մաքրման շաբաթօրյակներ | այո | այո | այո | | | այո | | | այո | | | այո | | | այո | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **14. Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող համայնքներում՝ զբոսաշրջության զարգացման խթանում** | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Զբոսաշրջությունից եկամուտ ստացող տնային տնտեսությունների աճ նախորդ տարվա համեմատ | | | | | | | | | | | | | | | | | | | X | Զբոսաշրջությունից եկամուտ ստացող տնային տնտեսություններ | Խմբային հարցազրույց/ֆոկուս խումբ |
| Համայնք այցելած զբոսաշրջիկների թվաքանակի աճ նախորդ տարվա համեմատությամբ | | | | | | | | | | | | | | | | | | | X | Հյուրանոցներ, տուրսիստական գործակալություն-ներ, համայնքապետա-րան | Խմբային հարցազրույց/ֆոկուս խումբ |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **15. Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում** | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Համայնքի միջոցներով կազմակերպված ծրագրերի և միջոցառումների քանակ | | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **16.Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանում** | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Համայնքում ծնելիության աճ նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով | 1 | 2,5 | 3,0 | | | 3,5 | | | 4,0 | | | 4,5 | | | 5,0 | | | | X | ՔԿԱԳ բաժին | Հարցում |
| 3 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքների աճ նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով | 1 | 2,0 | 2,5 | | | 3,0 | | | 3,5 | | | 4,0 | | | 4,5 | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **17.Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծում** | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ոչ վարակիչ հիվանդությունների հիվանդացության նվազում նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսներով | | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան, համայնքապետա-րանի ենթակայության բժշկական հաստատություն-ներ | Փաստաթղթային ուսումնասիրություն կամ հարցում |
| Համայնքային ենթակայության բուժական հիմնարկի կողմից այլ բուժական հիմնարկներ ուղղորդված այցելուների քանակի նվազում նախորդ տարվա համեմատ | | | | | | | | | | | | | | | | | | | X | Բժշկական հաստատություն-ներ | Հարցում կամ հարցազրույց |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **18. Համայնքային  հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանում** | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Համայնքային կյանքում կազմակերպվող միջոցառումներ, որոնց մասնակցել են հաշմանդամություն ունեցող անձիք (որպես ընդհանուր միջոցառումների թվաքանակի տոկոս) | | | | | | | | | | | | | | | | | | X | | Հաշմանդամու-թյուն ունեցող անձիք | Խմբային հարցազրույց/ֆոկուս խումբ |
| Համայնքային կյանքում կազմակերպվող միջոցառումներին մասնակցած հաշմանդամություն ունեցող անձանց թվի (որպես հաշմանդամություն ունեցող անձանց տոկոս) | | | | | | | | | | | | | | | | | | X | | Հաշմանդամու-թյուն ունեցող անձիք | Խմբային հարցազրույց/ֆոկուս խումբ |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **19. Բարեգործության խթանում** | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Բարեգործական նպատակներով հանգանակված գումար հաշվարկված որպես համայնքի սեփական եկամուտների տոկոս | | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան/բարեգործա-կան կազմակերպություննն | Հարցում կամ հարցազրույց |
| Համայնքի կողմից կազմակերպված բարեգործական միջոցառումների քանակ | | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ցուցանիշ 1 | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ցուցանիշ 2 | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ցուցանիշ n | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՎԵՐԴԼՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սվերդլով համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սվերդլով, (077) 052600, sverdlov.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 61

## ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով,44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով,համայնքի ավագանու 2014թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ օրենսդրությամբ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 50-Ա որոշմամբ,հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայությունից արձակվածների,պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման,հաշմանդամների,կերակրողին կորցրած ընտանիքների,սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Սվերդլով համայնքի ավագանին որոշում է

1.Բավարարել համայնքի երկու բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց հատկացնել սոցիալական օգնություն,ընդամենը երեսուն հազար դրամ գումար,համաձայն հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշման ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում վճարել հատկացված գումարը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՀՐԱՉԻԿ
2. ԽԱԼԱԹՅԱՆ ԱՎԵՏԻՔ
3. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱԶԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՍԱՐ ՉԵՐՔԵԶՅԱՆ

Հավելված
22 Լոռու մարզի
Սվերդլով համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 21-ի N61 որոշման

Ց ՈՒ Ց Ա Կ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՎԵՐԴԼՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1) Ղազարյան Վեներա Մուշեղի - 15000դրամ
2) Քարամյան Մարիանա Արմենի - 15000դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ՝ երեսուն հազար դրամ։

ՍՎԵՐԴԼՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՍԱՐ ՉԵՐՔԵԶՅԱՆ

ՍՎԵՐԴԼՈՎԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԿԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ